«ՓՄՁ-Ն՝ ԹՎԵՐՈՎ»
ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՄԱՍԻՆ:
ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2024-25ԹԹ

ԵՐԵՎԱՆ 2026Թ, ՄԱՐՏ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. *Նախաբան* 2

1.1. Տեղեկանքի մասին (համառոտ): **2**

1.2. Փոքր եվ միջին ձեռնարկատիրություն **2**

1.3. Փոքր եվ միջին ձեռնարկատիրության դասակարգումը (չափորոշիչներ) **3**

1.4. Փաստաթղթի նպատակը **4**

2. *ՓՄՁ-ն թվերով:* 2024-25*թթ համեմատական* 4

2.1. Տնտեսավարողներ/ՓՄՁ քանակային ցուցանիշներ **2024-25թթ** **4**

2.2. ՓՄՁ քանակային: Ըստ ՓՄՁ դասակարգման եվ կազմակերպաիրավական ձեվերի **5**

2.3. ՓՄՁ քանակային: Ըստ գործունեության ոլորտների **8**

3. *ՓՄՁ: Հարկման համակարգեր* 11

3.1. ՓՄՁ քանակային: Ըստ հարկման համակարգերի **11**

ՓՄՁ: Հարկեր/ համեմատական 13

3.2. Իրացման շրջանառություն (շրջ. հարկ վճարողներ) **13**

3.3. Շրջանառության հարկ:Համեմատություններ **14**

4. *Ամփոփում* 16

1. ՆԱԽԱԲԱՆ

1.1. ՏԵՂԵԿԱՆՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՄԱՌՈՏ):

Այս տեղեկանքը պատրաստվել է «ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա» ՀԿ-ի (այսուհետ ՓՄՁ Ասոցիացիա) սեփական ռեսուրսներով, ելնելով ՀՀ ՊԵԿ տվյալների բազայում առկա պաշտոնական տրամադրած ինֆորմացիայից և ներքին վերլուծական կարողություններից: ՓՄՁ Ասոցիացիան, ելնելով իր հիմնական մանդատից՝

- ՓՄՁ շահերի պաշտպանություն,
- ՓՄՁ օրենսդրական դաշտի բարելավում,
- ՓՄՁ-պետություն երկխոսության ապահովում,
- և այլն

կարևոր է համարում ձևավորել ավելի հստակ պատկեր մեր երկրում գործող ՓՄՁ-ների մասին:

Հաշվի առնելով, որ այսօր ՀՀ-ում առկա տարբեր վիճակագրական տվյալներում, կամ առանձին վերցրած պաշտոնական հրապարակումներում և հրապարակային հայտարարություններում հստակ և ամբողջական չեն արտացոլում Հայաստանում «**ՓՄՁ պետական աջակցության մասին**» ՀՀ օրենքով[1] սահմանված ՓՄՁ չափորոշիչներով ՓՄՁ-ների քանակային տվյալներով, վճարված հարկերի մասին համապարփակ պատկերը, ՓՄՁ Ասոցիացիայի հարցումների միջոցով, ՀՀ ՊԵԿ տվյալների բազայի հիման վրա կազմվել է սույն տեղեկանքը (Տեղեկանք):

Սույն Տեղեկանքը կազմելու համար ***հատուկ շնորհակալություն ենք հայտնում ՀՀ Պետական եկամուտների կոմիտեին[2], մասնավորապես ՀՀ ՊԵԿ Հարկային տեղեկատվության և վերլուծության վարչության աշխատակիցներին***, ովքեր մեր բոլոր հարցումներին պատասխանել են մանրակրկիտ, խորամուխ լինելով հայցվող տեղեկատվության բոլոր մանրամասնություններին:

Տեղեկանքը կազմվել է հիմնվելով ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա: Այն հնարավոր ընդգրկուն ինֆորմացիա է՝ հիմնված տնտեսավարողների կողմից ՀՀ ՊԵԿ ներկայացված հաշվարկ, հաշվետվությունների տվյալներից հավաքագրված պաշտոնական տվյալներից:

Ծանոթագրություն: *«ՓՄՁ Ասոցիացիան», փոքր և միջին ձեռնարկատերերի անդամության հիման վրա ստեղծված, բիզնես շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կառույց է, որը պաշտոնապես գրանցվել է 2014թ-ի ապրիլի 10-ին: Որպես իր հիմնական նպատակ, սահմանել է ՓՄՁ շահերի պաշտպանությունը, վերջիններիս համար օրենսդրական դաշտի բարելավումը, պետություն-մասնավոր հատված երկխոսության ապահովումը:*

1.2. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պաշտոնական սահմանումը տրված է «Փոքր եվ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՕ-121 ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2002թ-ին: Սույն օրենքով ի սկզբանե սահմանված են եղել ՓՄՁ-ին դասակարգող այլ չափորոշիչներ, որոնք ավելի մոտ են եղել մեր երկրի տնտեսության կառուցվածքին:

[1] https://www.arlis.am/hy/acts/64617/latest
[2] https://src.am/am

Սակայն «Փոքր եվ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՕ-121 ՀՀ օրենքի 2010թ-ի հոկտեմբերի 5-ի փոփոխություններով, փոփոխվել են նաև ՓՄՁ չափորոշիչները, որոնք ավելի մոտարկվեցին Եվրոպական միության երկրների չափորոշիչներին, իրականում հիմքում դնելով ավելի առաջանցիկ չափորոշիչներ, որոնցից հատկապես «Միջին» բիզնեսի դասակարգումը, կարծում ենք փոքր ինչ ավելի առաջանցիկ է քան մեր երկրի իրական տնտեսության հետ համեմատության մեջ:

Բացի ՓՄՁ չափորոշիչներից, տվյալ օրենքով սահմանված են այն պետական աջակցության ուղղությունները, որոնք անհրաժեշտ են և պարտադիր իրականացման ՀՀ-ում ՓՄՁ զարգացման համար: Սահմանված է ՓՄՁ զարգացման համար պետական աջակցության ծրագրերի (և կամ ռազմավարությունների) ընդունումը և ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից:

Հանրային խոսույթում մենք հաճախ հանդիպում ենք ՓՄՁ խմբերին բնորոշող այլ չափորոշիչներ, որոնք ավելի շատ ներկայացնում են տվյալ խմբի ՓՄՁ-ներին ըստ իրենց ընտրած հարկային ռեժիմների:

Օրինակ: Մենք լսում ենք, որ *շրջանառության հարկ վճարողներն են հենց ՓՄՁ-ները*, որն ամենևին կապ չունի մեր երկրի ՓՄՁ դասակարգման հետ:

Ավելին, Հայաստանում գործող «ՀՀ Հարկային օրենսգիրք» ՀՕ-165-Ն[3] ՀՀ օրենքի տիրույթում չէ ՓՄՁ-ների զարգացումն ու դասակարգումը: Այս օրենքով, Բաժին 13-ում, սահմանված են «Հարկման հատուկ համակարգեր», որտեղ ներկայացված են «Շրջանառության հարկի համակարգ» և «Միկրոձեռնարկատիրության համակարգը», որոնք ներդրված են, որպես դասական հարկման ռեժիմների այլընտրանքային հարկման համակարգեր: Չնայած նրան, որ հարկային օրենսդրությամբ, հարկման հատուկ համակարգերից կարող են օգտվել հիմնականում հենց «Գերփոքր[4]» բիզնեսները, սակայն դա բնավ չի նշանակում, որ մեր երկրում չկան ՓՄՁ-ներ, ինչպես նաև գերփոքրեր, որոնք գործում են հարկման ընդհանուր համակարգում:

1.3. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ (ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ)

Համաձայն վերոհիշյալ «Փոքր եվ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են.

- **գերփոքր**՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը.
- **փոքր**՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը.
- **միջին**՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:

[3] https://www.arlis.am/hy/acts/220843/latest
[4] Տես սահմանումը սույն Տեղեկանքի 1.3 կետում

Գերփոքր, Փոքր և Միջին սուբյեկտներին միասին վերցրած ընդունված է անվանակոչել **ՓՄՁ** սուբյեկտներ:

Հաշվի առնելով նաև այն, որ ՀՀ-ում գործող հարկային օրենսդրության համաձայն, ոչ բոլոր դեպքերում է պարտադիր ՀՀ ՊԵԿ ներկայացնել տարեվերջին տվյալ տնտեսավարողի **ակտիվների հաշվեկշռային արժեքի մասին** հաշվարկ, հաշվետվություններ և տեղեկատվություն՝ որոնք բնորոշում են Գերփոքր սուբյեկտների ևս մեկ չափորոշիչ (տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեք), ՓՄՁ Ասոցիացիան հարցումներում առաջնորդվել է միայն երկու չափորոշիչներով՝ տարեկան հասույթ և աշխատողների թվաքանակ: Որն ընդգրկուն և ՓՄՁ-ին ավելի ճշգրիտ հատկորոշելու ընտրանք է:

1.4. ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն փաստաթղթի նպատակն է մեկ միասնական Տեղեկանքում հանրային ներկայացնել ՓՄՁ-ներին բնորոշող այս փաստաթղթում նշված մեթոդաբանությամբ լրացուցիչ թվային տվյալներ, որոնք եվս ամբողջական չեն տալիս ՓՄՁ-ներին վերաբերելի ողջ պատկերը, սակայն շատ օգտակար կլինեն առաջին հերթին հենց ՓՄՁ-ներին, ինչպես նաև վերջիններիս համար քաղաքականություններ մշակող, քաղաքական խոստումներ տվող, գնահատող, կիրառող և լուսաբանող հանրության լայն շերտերի համար:

Եթե այս Տեղեկանքում տեղ գտած ինֆորմացիան օգտակար և կիրառելի կհամարվի որևէ օգտագործողի համար, ապա այն ազատ է տիրապետման, միայն թե պահպանելով սկզբնաղբյուրում հղվելու պայմանը մշակողին՝ ՓՄՁ Ասոցիացիային:

2. ՓՄՁ-Ն ԹՎԵՐՈՎ: 2024-25ԹԹ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

2.1. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐ/ՓՄՁ ՔԱՆԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 2024-25ԹԹ

Հայաստանում 2024թ-ի վերջին **գործող տնտեսավարողների**[5] քանակը կազմել է **168,470**: Նույն ցուցանիշը, նույն չափորոշիչներով հայցված, 2025թ-ի վերջին կազմել է **174,241**՝ այսինքն 5,771-ով ավելի:

Սակայն նույն ցուցանիշը եթե դիտարկում ենք մեկ այլ մեթոդաբանությամբ՝ որևէ իրացման շրջանառություն ունեցող **ակտիվ տնտեսավարողների** (**առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր)**[6], ապա քանակները համարյա *կիսով չափ* ավելի փոքր են: Համապատասխանաբար տվյալ մեթոդաբանությամբ դիտարկելիս, ակտիվ, առևտրային (ոչ պետական), կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի քանակը 2024թ-ի վերջին կազմել է **72,294** տնտեսավորող, իսկ 2025թ-ի տարեվերջին՝ **75,323**: Այսինք, կարելի է ասել, որ իրական բիզնես գործունեություն վարող և այս չափորոշիչներով մեկ տարվա քանակական աճը կազմել է շատ ավելի փոքր՝ 3,029 տնտեսավարող:

Գործող տնտեսավարողների կազմում, գործող ՓՄՁ ների (այս դեպքում վերցվել են նույն տրամաբանությամբ նաև այն ՓՄՁ-ները, որոնք գործունեության դադարեցման դիմում չեն

[5] «**գործող տնտեսավարող**» (գործող տնտեսավարողներ (անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձինք և կազմակերպություններ(այդ թվում պետական)), որոնք գոնե 0-ական հաշվետվություն են ներկայացրել հայցվող ժամանակաշրջանում), **դադարեցված չեն**:

[6]«**ակտիվ տնտեսավարողներ**» (այն առևտրային կազմակերպություններն (առանց պետական կազմակերպությունների, ՀԿ-ների) ու Ա/Ձ-ները, որոնք հայցվող ժամանակաշրջանում հայտարարագրել են 0-ից բարձր որևէ իրացման շրջանառություն:

ներկայացրել, ներառյալ նրանք, որոնք ներկայացրել են 0-ական հաշվետվություններ) քանակը կազմել է ընդհանուրի մոտ 47%-ը (համապատասխանաբար 2024թ-ին կազմելով 78,451, իսկ 2025թ-ին՝ 81,736):

Սակայն շատ ավելի կարևոր ենք համարել, դիտարկել **ակտիվ տնտեսավարողների** կազմում գործող **ակտիվ ՓՄՁ**[7]-ների քանակային կազմը: Ըստ այդմ, 2024թ-ի արդյունքներով, ակտիվ՝ 72,294 տնտեսավարողներից, ակտիվ ՓՄՁ-ները կազմել են **70,082**, իսկ 2025թ-ի արդյունքներով, ակտիվ՝ 75,323 տնտեսավարողներից, ակտիվ ՓՄՁ ները կազմել են **72,959:** Այսինքն այս մեթոդաբանությամբ դիտարկելիս, ՀՀ-ում գործող, առևտրային գործունեություն ծավալող **ակտիվ տնտեսավարողների կազմում, ակտիվ ՓՄՁ-ների** քանակը կազմել է ընդգծված մեծամասնությունը՝ **97 տոկոս:**

Գրաֆիկ 1. *Ակտիվ տնտես/ՓՄՁ ներ 24-25թթ*



2.2. ՓՄՁ ՔԱՆԱԿԱՅԻՆ: ԸՍՏ ՓՄՁ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ

Երբ ուսումնասիրում ենք առանձին վերցրած հենց **ակտիվ ՓՄՁ**-ների քանակային դինամիկան, որն ըստ 2024-25թթ-ի աճել է **2,877**-ով (2024թ-ին՝ 70,082-ից 2025թ-ին՝ 72,959), դրանց կազմում ամենաշատ քանակային աճել են Գերփոքր ակտիվ առևտրային տնտեսավարողները: Այս տրամաբանությամբ թվերը համեմատելիս ունենում ենք հետևյալ պատկերը.

[7] «**ակտիվ ՓՄՁ**» (այն ակտիվ տնտեսավարողները, որոնք ըստ ՓՄՁ չափորոշիչների համարվել են Գերփոքր, Փոքր և միջին և հայցվող ժամանակաշրջանում իրականացրել են առևտրային գործունեություն և հայտարարագրել 0-ից բարձր իրացում):

Աղյուսակ 1. *ՓՄՁ խմբերով 24-25թթ*

ՓՄՁ-ն խմբերով	**2024թ**	**2025թ**	**Քանակային տարբերություն**
Ակտիվ **ՓՄՁ**-*ների քանակ*	70,082	72,959	↑ 2,877
որից՝			
Գերփոքր	57,968	59,710	↑ 1,742
Փոքր	9,850	10,694	↑ 844
Միջին	2,264	2,555	↑ 291

Ակտիվ ՓՄՁ-ների կազմում, շարունակում են մեծամասնություն կազմել հենց «Գերփոքր» (տարեկան մինչև 100 մլն հասույթ և մինչև 10 աշխատակից ունեցողները) տնտեսավարողները՝ **ՓՄՁ-ների 82-83**%: Իսկ ընդհանուր ակտիվ տնտեսավարողների կազմում վերջիններս կազմում են մոտ **80** %-ը:

Գրաֆիկ 2. *ՓՄՁ խմբերով 24-25թթ*



Որպես ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, օրենքով թույլատրելի, պետական գրանցում ստացած, ձևերից ամենագերակշիռը մեր երկրում շարունակում է մնալ անհատ ձեռնարկատերերի (**Ա/Ձ**) ձևաչափը: 2024-25թթ-ի արդյունքներով Ա/Ձ-ները կազմել են ակտիվ ՓՄՁ-ների **49-49.7**%-ը: Իսկ ՓՄՁ Ասոցիացիայի համար թիրախ խումբ համարվող Գերփոքր տնտեսավարողների կազմում Ա/Ձ-ները եղել են **56**%:

Երկրորդ տեղում են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (**ՍՊԸ**) ձևով տնտեսական գործունեություն վարողները՝ ակտիվ ՓՄՁ-ների **47.4-47.9** %-ը:

Փոքրամասնություն են շարունակում կազմել բաժնետիրական ընկերությունները (**ՓԲԸ, ԲԲԸ**), որոնք ակտիվ ՓՄՁ ների կազմում զբաղեցնում են **2-2.1** %, իսկ ընդհանուր ակտիվ տնտեսավարողների կազմում՝ 1.9%:

Նույն դիտարկվող ժամանակահատվածում, Ա/Ձ-ների, ՍՊԸ-ների քանակային աճ է գրանցվել ակտիվ ՓՄՁ-ների համարյա թե բոլոր խմբերում, իսկ բաժնետիրական ընկերությունները, հակառակը՝ պակասել են Գերփոքր և Փոքր տնտեսավարողների խմբերում:

Բաժնետիրական ընկերությունների դրական քանակային աճ է գրանցվել միայն Միջին տնտեսավարողների խմբում, այն էլ ոչ շատ, ընդամենը 17-ով: Բաժնետիրական ընկերությունների աճը, որոշ չափով բնորոշում է բիզնես միջավայրի ավելի կայացվածության և երկարատևության աստիճանը: Իսկ դրան հակառակ, անհատ ձեռնարկատերի ինստիտուտը, դա ֆիզիկական անձի կարգավիճակով ձեռնարկատերն է (որը ցավոք սրտի հանդիպում է նույնիսկ Միջին դասակարգում ունեցող տնտեսավարողների մոտ և 10-ով ավելացել է), որը *չունի կազմակերպության կարգավիճակ, կորպորատիվ կառավարում* և այլ ընթացակարգեր, որոնք կբնորոշեն տվյալ տնտեսավարողի կայացվածությունն ու երկարատևությունը:

Աղյուսակ 2. ***ՓՄՁ կազմ. ձևերով***

ՓՄՁ-ն խմբերով	2024թ	2025թ	2024 Ա/Ձ	2025 Ա/Ձ	2024 ՍՊԸ	2025 ՍՊԸ	2024 ՓԲԸ ԲԲԸ	2025 ՓԲԸ ԲԲԸ	2024 Այլ	2025 Այլ
Գերփոքր	57,968	59,710	32,956	33,729	23,946	24,961	785	760	281	260
Փոքր	9,850	10,694	1,846	2,242	7,469	7,936	447	432	88	84
Միջին	2,264	2,555	94	104	1,861	2,112	277	294	32	45

Մեր երկրում բիզնես վարելու կազմակերպաիրավական այս տեսքով կառուցվածքը, որտեղ մեծամասնություն են կազմում Ա/Ձ-ներն ու ՍՊԸ-ները, հուշում է, որ բաժնետիրական ընկերությունների ձևաչափով գործելու խրախուսման ուղղությամբ քաղաքականությունները բավարար չեն: Սա նաև բիզնեսի վարման մշակույթի խնդիր է ընդհանրապես ընկերությունների գրանցման ձևաչափով բիզնես վարելու, կառավարելու հարցերում:

Գրաֆիկ 3. *ՓՄՁ իրավական ձևեր 24-25թթ*



2.3. ՓՄՁ ՔԱՆԱԿԱՅԻՆ: ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Սոյն Տեղեկանքի ձևավորման մեջ կարևոր ենք համարել նաև անդրադարձ կատարել ակտիվ ՓՄՁ-ների գործունեության ոլորտներին: Կարևորելով այդ տվյալները, փորձ է արվել ներկայացնել, թե մեր ակտիվ տնտեսավարողների կազմում, մասնավորապես ՓՄՁ-ների կազմում, խոշոր խմբերով, որ ոլորտներն են գերակաշռում: Հաշվի առնելով, որ կան դեպքեր, երբ տնտեսավարողները միաժամանակ գործունեություն են ծավալում մի քանի ոլորտներում, վերլուծության համար հիմք ենք վերցրել **բացառապես տվյալ ոլորտում գործողների**[8], որոնց տարբերակման դեպքում էլ հանդիպել են տնտեսավարողներ, որոնք մեկից ավելի ոլորտում են գործում: Այս մոտեցումը թույլ է տվել ավելի մոտարկված ստանալ ոլորտային բաշխվածությունը:

Այսպես, ըստ պաշտոնական հարցումների տրամադրված տվյալների արդյունքների, գերակշիռ մեծամասնություն են շարունակում կազմել բացառապես **առևտրի** ոլորտում գործող ակտիվ ՓՄՁ-ները: Ակտիվ ՓՄՁ-ների կազմում վերջիններիս քանակը 2024-2025թթ-ի արդյունքներով կազմել է **40-41**%:

Երկրորդ տեղում են ծառայությունների ոլորտը, որն այս Տեղեկանքում դիտարկվել է բացառապես ծառայությունների ոլորտ՝ առանց հանրային սննդի, իրավաբանական և հաշվապահական ծառայությունների (*այս Տեղեկանքում, ընդհանուր ծառայությունների ոլորտից, առանձին ենք դիտարկել հանրային սննդի, հաշվապահական և իրավաբանական ծառայությունների մատուցման ոլորտները, հաշվի առնելով, վերջին շրջանում կատարված, այս ոլորտներին վերաբերելի զգայուն օրենսդրական փոփոխությունները*): Այս տրամաբանությամբ ակտիվ ՓՄՁ-ների կազմում, ակտիվ գործունեություն ծավալած **ծառայությունների ոլորտի** ՓՄՁ-ները կազմել են **38**%-ը:

Իսկ **արտադրության ոլորտում** ակտիվ գործունեություն ծավալածները, ակտիվ ՓՄՁ-ների կազմում եղել են **11**%-ը: Պատկերը՝ տոկոսային արտահայտված, համարյա թե նույնն է, եթե համեմատենք թվերը ընդհանուր ակտիվ տնտեսավարողների կազմում առևտրի, ծառայությունների և արտադրության ոլորտներում:

Առանձին վերցրած, հանրային սննդի ոլորտում գործող ակտիվ ՓՄՁ-ների կազմում տնտեսավարողների քանակը կազմել է **5**%, իրավաբանական ծառայություններ[9] մատուցողները՝ մոտ **1**%, իսկ հաշվապահական ծառայություններ մատուցողները մոտ **1.3-1.5**%:

[8] «**բացառապես տվյալ ոլորտ**» (այն ոլորտը, որը տվյալ տնտեսավարողի հասույթում գեներացրել է 50 տոկոսից ավելին: Կան դեպքեր երբ դրանք հավասար են, մասնակցել է երկու ոլորտում:)

[9] իրավաբանական ծառայություններ (այս տեղեկանքում տեղ գտած իրավաբանական ծառայություններին վերաբերելի խմբի մասին ինֆորմացիան տեսակավորվել է ՀՀ ՊԵԿ-ից ստացված տվյալների համաձայն, որոնք տրամադրվել են տնտեսական գործունեության դասակարգչի 4 նիշանոց ճշտությամբ: Ենթադրում ենք, որ այս խմբում ներառված չեն 4 նիշից ավելի շատ բացվածքով հաշվետվություն ներկայացրած ֆիզիկական անձ (այդ թվում Ա/Ձ) փաստաբանները:

Գրաֆիկ 4. *ՓՄՁ ոլորտներով 24-25թթ*



Ըստ ոլորտների և ըստ բիզնեսի գրանցման տեսակների դիտարկումը ևս վկայում է, որ շարունակում են մեծամասնություն կազմել Ա/Ձ-երը, ՍՊԸ-ները:

Ակտիվ **Գերփոքր** տնտեսավարողների խմբում, 2025թ-ի արդյունքներով, 59,710-ից տնտեսավարողներից 23,905-ը (Գերփոքրերի՝ 40 %) գործել են **առևտրի** ոլորտում, որոնցից 16,394-ը՝ որպես **Ա/Ձ** (ոլորտի 68 տոկոսը), մնացած 7,404-ը որպես ՍՊԸ-ներ, 64-ը, որպես բաժնետիրական, մնացած՝ 43-ը այլ ձևով: Նույն խումբը, 2024թ-ի համեմատ, ընդհանուր 65-ով պակասել են, որից Ա/Ձ-երի խմբում՝ (136), ՍՊԸ-ների խմբում +95, իսկ մյուս խմբերում միասին վերցրած՝ -24:



Ակտիվ **Գերփոքր** տնտեսավարողների խմբում, 2025թ-ի արդյունքներով, 59,710 տնտեսավարողներից 6,822-ը (Գերփոքրերի 11%-ը), գործել են արտադրության ոլորտում, որից 4,174-ը՝ որպես Ա/Ձ, 2,544-ը՝ որպես ՍՊԸ, 61-ը՝ որպես բաժնետիրական, մնացած 43-ը այլ ձևով: Արտադրության ոլորտում, 2024թ-ի համեմատ, ընդհանուր գործող Գերփոքրերի կազմում անկում չի գրանցվել, այլ հակառակը 165-ով ավելացել են, հիմնականում որպես ՍՊԸ-ներ:

Այս տրամաբանությամբ դիտարկելիս, ուշադրության է արժանի այն, որ չնայած նրան, որ Ա/Ձ-ները շարունակում են ամենաշտ քանակային խումբը լինել հենց առևտրի ոլորտում, բայց տոկոսային

հարաբերակցությամբ առաջատար է հանրային սննդի ոլորտի կազմում գործող Ա/Ձ ների **71 տոկոսից** ավելի ներկայացվածությունը:

Որպես կազմակերպությունների նվազագույն կազմակերպաիրավական ձև, իրենց ոլորտային Գերփոքր բիզնեսների կազմում, ՍՊԸ-ները ամենամեծ մասնաբաժինը ունեն ծառայությունների ոլորտի **հաշվապահական և իրավաբանական** ծառայությունների մատուցման խմբերում՝ **80-81**%:

Բաժնետիրական ընկերությունների ամենաշատ քանակը տեսնում ենք ծառայությունների ոլորտի տնտեսավարողների խմբում (առանց հանրային սննդի, հաշվապահական և իրավաբանական ծառայությունների), քանակային՝ 548 ընկերություն:

Աղյուսակ 2. *Գերփոքր/կազմ. ձև/ոլորտ (2025)*

Գերփոքր՝	Գերփոքր /քանակ	Ա/Ձ	Ոլորտ /%	ՍՊԸ	Ոլորտ /%	ՓԲԸ/ ԲԲԸ	Ոլորտ /%
Առևտուր	23,905	16,394	➡68.5%	7,404	➡ 30.9%	64	➡ 0.26%
Արտադր.	6,822	4,174	➡ 61.1%	2,544	➡ 37.2%	61	➡ 0.89%
Ծառայութ	22,632	10,072	➡ 44.5%	11,862	➡ 52.4%	548	➡ 2.5%
Հանրային սնունդ	2,941	2,113	➡ 71.8%	813	➡ 27.6%	7	➡ 0.23%
Հաշվապահ.	949	167	➡17.5%	765	➡ 80.6%	17	➡ 1.7%
Իրավաբան.	597	96	➡ 16.0%	484	➡ 81.0%	16	➡ 2.6%
	57,846	*33,016*		*23,872*		*713*	

Ստորև գրաֆիկական պատկերով 2024-25թթ-ի Գերփոքր տնտեսավարողների կազմում կազմակերպաիրավական *ձև/ոլորտ/քանակ* դինամիկան:

Գրաֆիկ 5. Գերփոքր*: ոլորտ/կազմ ձև/24-25թթ*



Ամփոփելով այս բաժինը (քանակային, ոլորտային ՓՄՁ-ներ), կարող ենք արձանագրել, որ 2024-25թթ-ի համեմատությամբ, հանրագումարային թվերով, **քանակական աճել են** ակտիվ գործող ՓՄՁ-ները: Բացառությամբ, որոշ ոլորտների և կազմակերպաիրավական ձևերով խմբերի, որտեղ մեկ տարվա ընթացքում, որպես ակտիվ գործողների թվի նվազում է գրանցվել, որը չի ազդել տվյալ խմբերի ընդհանուր թվի աճին: ՓՄՁ յուրաքանչյուր խմբի քանակային անկում գրանցած թվերն ըստ կազմակերպաիրավական ձևերի՝

Գերփոքր		Փոքր		Միջին	
Առևտուր՝		Առևտուր՝		Առևտուր	
Ա/Ձ՝	(136)	**ՓԲԸ/ԲԲԸ՝**	(6)	**Այլ՝**	(1)
ՓԲԸ/ԲԲԸ՝	(15)				
Այլ՝	(9)				
Արտադրություն՝		Արտադրություն՝		Արտադրություն՝	
ՓԲԸ/ԲԲԸ՝	(4)	**Այլ՝**	(2)	**Ա/Ձ՝**	(2)
Ծառայություններ՝		Ծառայություններ՝		Ծառայություններ՝	
ՓԲԸ/ԲԲԸ՝	(7)	**Ա/Ձ՝**	(8)		
Այլ՝	(11)	**ՓԲԸ/ԲԲԸ՝**	(5)		
		Այլ՝	(4)		

Գերփոքր		Փոքր		Միջին	
Հանրային սնունդ՝		Հանրային սնունդ՝			
ՓԲԸ/ԲԲԸ՝	(1)	**ՓԲԸ/ԲԲԸ՝**	(1)		
Այլ՝	(1)				
Հաշվապահական՝		Հաշվապահական՝			
ՓԲԸ/ԲԲԸ՝	(5)	**Ա/Ձ՝**	(6)		
Իրավաբանական՝		Իրավաբանական		Իրավաբանական՝	
ՓԲԸ/ԲԲԸ՝	(3)	**ՍՊԸ՝**	(10)	**ՓԲԸ/ԲԲԸ՝**	(3)
		ՓԲԸ/ԲԲԸ՝	(1)		

3. ՓՄՁ: ՀԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

3.1. ՓՄՁ ՔԱՆԱԿԱՅԻՆ: ԸՍՏ ՀԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ

Սույն Տեղեկանքում, փորձել ենք անդրադարձ կատարել նաև ՓՄՁ-ների գործունեությանն ըստ Հայաստանում գործող հարկային օրենսդրությամբ սահմանված հարկման համակարգերի: Մասնավորապես դիտարկել ենք, թե ՓՄՁ-ները, որ հարկման համակարգերում են գործել, ինչ քանակներով և ինչպիսի օրինաչափությամբ:

Ընդհանուր ակտիվ տնտեսավարողների (*առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ 0-ից բարձր որևէ իրացմամբ*) կազմում, ըստ հարկման համակարգերի խմբերի, ամենամեծ խումբն եղել են **շրջանառության հարկ**ի համակարգում գործողները (շրջ. հարկ վճարողներ): Որոնք 2025թ-ի տարեվերջի արդյունքներով կազմել են ակտիվ տնտեսավարողների **57.7**%-ը:

Այս խմբի տնտեսավարողների քանակային կազմը, 2024թ-ի համեմատ 2025թ-ի արդյունքներով մոտ **10 տոկոս աճ** է գրանցել: Չնայած նրան, որ 2024-25թթ-ի համեմատությամբ ակտիվ տնտեսավարողների աճը եղել է ոչ ավելի քան **4.2** տոկոս:

Երկրորդ ամենամեծ խումբը, դա **ընդհանուր հարկման դաշտում գործող** ակտիվ տնտեսավարողներն են, որոնք, 2025թ-ի արդյունքներով, ընդհանուր ակտիվ տնտեսավարողների կազմում եղել են **32.5**%:

Երրորդ, ավելի փոքր հիմնական խմբի տնտեսավարողները գործել են **միկրոձեռնարկատիրության հարկման** համակարգում, 2025թ-ի արդյունքներով զբաղեցնելով ակտիվ գործողների **9.2**%-ը: Միկրոձեռնարկատիրության հարկման համակարգում գործողները, հակառակ շրջ. հարկ վճարողների, մոտ **58** տոկոսով նվազել են՝ համեմատած 2024թ-ի տարեվերջի արդյունքների հետ:

Գրաֆիկ 6. *Ըստ հարկման համակարգերի _24-25թթ*



Մյուս դիտարկումը, որ փորձել ենք դուրս բերել այս Տեղեկանքում, դա Գերփոքր տնտեսավարողների կազմում գործողներն են՝ ըստ հարկման համակարգերի:

Տրամաբանորեն, Գերփոքր տնտեսավարողների կազմում գերակշիռ մեծամասնությունը եղել են **շրջանառության հարկ վճարող** տնտեսավարողները՝ Գերփոքրերի **67.3**%-ը: **Ընդհանուր հարկման** համակարգում գործող ակտիվ տնտեսավարողները Գերփոքր տնտեսավարողների կազմում եղել են **20.8**%, իսկ **միկրոձեռնարկատիրության հարկման** համակարգում գործողները՝ **11.5** %:

Փոքր և դրանցից ավելի մեծ՝ Միջին, տնտեսավարողների կազմում ավելի մեծ տոկոսային հարաբերակցությամբ եղել են **ընդհանուր հարկման համակարգում** գործող տնտեսավարողները: Համապատասխանաբար, Փոքր տնտեսավարողների կազմում՝ **69.5** տոկոս, Միջինների կազմում՝ **94.2** տոկոս: ՓՄՁ սուբյեկտների Փոքր և Միջին տնտեսավարողների խմբում գործել են նաև շրջ. հարկ վճարող քիչ թվով տնտեսավարողներ, որոնք ենթադրում ենք հայտնվել են այս խմբում, որպես հանրային սննդի ոլորտում գործողներ՝ 115.0 մլն շրջանառությունից բարձր շեմերով[10]:

[10] Համաձայն ՀՀ հարկային օրենսդրության Հանրային սննդի ոլորտում կարող են գործել առանց շրջ. հարկ վճարողների համար սահմանված տարեկան մինչև 115.0 մլն շրջանառության շեմի սահմանափակմամբ: Հետևաբար Փոքր և Միջին տնտեսավարողներ գործել են նաև այս հարկման համակարգում:

ՓՄՁ: ՀԱՐԿԵՐ/ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

3.2. ԻՐԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ (ՇՐՋ. ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ)

Տեղեկանքի այս բաժնում անդրադարձ ենք կատարել ՓՄՁ-ների մեծամասնություն կազմող **Գերփոքր** տնտեսավարողների շրջանառության հարկի համակարգում գործողների իրացման շրջանառությունների համեմատությանը:

Համեմատած 2024-25թթ-ի տվյալները, բոլոր մեծ խմբերով գործունեության ոլորտների շրջանառության հարկ վճարողների իրացման շրջանառությունները աճել են, բացառությամբ իրավաբանական և հաշվապահական ծառայություններ մատուցողների խմբերի:

Մասնավորապես **բացառապես առևտրի** ոլորտում գործող Գերփոքր տնտեսավարողների շրջ. հարկ վճարողների հանրագումարային իրացման շրջանառությունը, 2024-25թթ-ի համեմատությամբ, աճել է **27** տոկոսով, կամ **157,1** մլրդ դրամով: Հիշեցնենք, որ այս ոլորտում Գերփոքր խմբի առևտրի ոլորտում գործող ակտիվ տնտեսավարողների քանակային աճ չունեինք, այլ հակառակը, նրանց քանակը, հանրագումարով նվազել էր 65-ով:

Բացառապես **արտադրության** ոլորտի Գերփոքր տնտեսավարողների խմբի շրջ. հարկ վճարողների հանրագումարային իրացման շրջանառությունը, 2024-25թթ-ի համեմատությամբ, աճել է մոտ **2,2** մլրդ դրամով, որը համարժեք է **3** տոկոսի:

Բացառապես **ծառայությունների** (բացառությամբ հանրային սննդի, իրավաբանական և հաշվապահական ծառայությունների) ոլորտի Գերփոքր տնտեսավարողների խմբի շրջ. հարկ վճարողների հանրագումարային իրացման շրջանառությունը աճել է մոտ **46,7** մլրդ դրամով, կամ մոտ **9** տոկոսով:

Գրաֆիկ 7. *Շրջ. հարկ վճարողների իրացում_24-25թթ*



Բացառապես **հանրային սննդի** ոլորտի շրջ. հարկ վճարող ակտիվ տնտեսավարողների իրացման շրջանառությունը աճել է մոտ **14** տոկոսով, կամ մոտ **45,6** մլրդ դրամով:

Դիտարկվող՝ 2024-25թթ-ի համեմատության, ժամանակահատվածում, ընդհանուր շրջանառության հարկ վճարողների հանրագումարային շրջանառությունը աճել է մոտ **14** տոկոսով (1,6 տրիլիոնից հասնելով 1,8 տրիլիոնի): Սակայն, թվաբանական միջինով այս ցուցանիշը,

շրջանառության հարկ վճարող մեկ **ակտիվ** տնտեսավարողի հաշվով **նվազել** է մոտ **10** տոկոսով: Միջինացված այս ցուցանիշը, 2025թ-ի համար եղել է **42,2** մլն դրամ տարեկան՝ մեկ տնտեսավարողի հաշվով:

Շրջանառության հարկ վճարող **առևտրի** ոլորտի ակտիվ տնտեսավարողների, միջինացված մեկ տնտեսավարողի հաշվարկով, 2025թ-ի տարեկան շրջանառությունը կազմել է մոտ **31,1** մլն դրամ (*եթե սա դիտարկենք բոլոր գործող (այդ թվում ոչ ակտիվ, 0-ականներին) տնտեսավարողների այս խմբի մասնակցությամբ ավելի փոքր մոտ 28 մլն դրամ է*):

Նույն տրամաբանությամբ, **արտադրության** ոլորտում գործող շրջանառության հարկ վճարող ակտիվ տնտեսավարողների 2025թ-ի տարեկան միջինացված շրջանառությունը կազմել է **11,8** մլն դրամ, **ծառայությունների** ոլորտի գործողներինը՝ **26,3** մլն դրամ, իսկ **հանրային սննդի** ընդհանուր ակտիվ գործողների միջինիցվածը 102,2 մլն դրամ (*հիշեցնենք, որ հանրային սննդի ոլորտում գործում են նաև 115,0 մլն դրամից բարձր, առանց շրջանառության շեմի սահմանափակմամբ տնտեսավարողներ*):

Ուշադրության է արժանի հաշվապահական և իրավաբանական ծառայությունների ոլորտի, հատկապես Գերփոքր տնտեսավարողների, տվյալները վերոհիշյալ տրամաբանությամբ դիտարկելը (*ինչպես նշվել է այս Տեղեկանքի սկզբում, հաշվի առնելով այս երկու ոլորտների համար կատարված հարկային օերնսդրության փոփոխությունները, որոնք հիմնականում ուժի մեջ մտան 2025թ-ի կեսից*):

Բացառապես հաշվապահական ծառայություն մատուցող, տարեկան մինչև 115,0 մլն դրամ շրջանառություն ունեցող տնտեսավարողների տարեկան հանրագումարային իրացման շրջանառությունը 2024թ-ի՝ **25,4** մլրդ դրամից **նվազել** է 2025թ-ի **23,5** մլրդ դրամի: Այս հաշվարկում հաշվի են առնվել նաև 2025թ-ի արդեն 2-րդ կիսամյակի ընթացքում հաշվապահական ոլորտի ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ-ի) դաշտում գործելու պայմաններում իրացման շրջանառությունը:

Ավելի մեծ նվազում է արձանագրվել իրավաբանական ծառայությունների ոլորտի, տարեկան մինչև 115,0 մլն շրջանառություն ունեցողների, տարեկան հանրագումարային իրացման շրջանառությունները 2024-25թթ-ի համեմատության մեջ: Մասնավորապես այս ոլորտի և այս խմբի տարեկան իրացման շրջանառությունը 2024թ-ին եղել է մոտ **21,2** մլրդ դրամ, իսկ 2025թ-ի արդյունքներով (*հաշվի առած նաև 2025թ-ի 2-րդ կիսամյակի ԱԱՀ-ի դաշտում գործելու իրացման շրջանառությունը*) հանրագումարային իրացման շրջանառությունը կազմել է մոտ **13,0** մլրդ դրամ (անկումը մոտ **64** %): Եթե դիտարկենք վերոգրյալ քանակային տարբերությունը, նույն խմբի գործող նույն՝ իրավաբանական ոլորտի, ակտիվ տնտեսավարողների քանակների նվազումը, այն կազմել էր ավելի քիչ, մոտ՝ **23** տոկոս:

3.3. ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ:ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջանառության հարկի համակարգում գործող, շրջանառության հարկ վճարողները, որպես ակտիվ տնտեսավարողների մեծամասնություն կազմող տնտեսավարողների Գերփոքր բիզնեսի խումբ, դիտարկվել են նաև իրենց կողմից հայտարարագրած հարկի դինամիկան հասկանալու համար:

Մասնավորապես, նախ դիտարկվել է ընդհանուր շրջանառության հարկ վճարողների հայտարարագրած իրացման շրջանառությունն ու հայտարարագրած շրջանառության հարկը՝ համեմատելի 2024-25թթ-ի համար: Որի արդյունքում, միջինացված տոկոսադրույքը **3.94%**-ից աճել է **4.55%**-ի: Աճ արձանագրվել է շրջանառության հարկ վճարողների բոլոր գործունեության ոլորտներում:

Այս ցուցանիշը դիտարկվում է տվյալ խմբի տնտեսավարողների կողմից հայտարարագրած, հանրագումարային, վճարման ենթակա շրջանառության հարկը (*հարկային օրենսդրությամբ սահմանված նվազեցումներն ու հաշվարկներն անելուց հետո, որն ընդունված է նաև ասել* ***արդյունավետ դրույքաչափ***) հարաբերած տվյալ խմբի հանրագումարային իրացման շրջանառությանը:

Առանձին վերցրած, շրջանառության հարկ վճարող բացառապես **առևտրի** ոլորտում գործողների մոտ, միջինացված շրջանառության հարկի դրույքը աճել է **2.39%**-ից **2.56%**-ի:

Բացառապես **ծառայությունների** (առանց հանրային սննդի, հաշվապահական և իրավաբանական ծառայությունների) ոլորտում գործող շրջանառության հարկ վճարողների հայտարարագրած հանրագումարային միջինացված շրջանառության հարկի դրույքը աճել է **5.18%**-ից **5.99%**:

Նույն տրամաբությամբ, շրջանառության հարկ վճարող, **արտադրության** ոլորտում գործողների մոտ թերևս գրանցվել է այս խմբի շրջանառության հարկի միջինացված արդյունավետ դրույքի **ամենաբարձր աճը՝ 3.68%**-ից աճելով **5.04%**-ի:

Հանրային սննդի ոլորտում գործող շրջանառության հարկ վճարողների մոտ միջինացված, շրջանառության հարկի արդյունավետ դրույքն աճել է **4.47%**-ից **5.85%**:

Հաշվապահական և իրավաբանական ծառայությունների ոլորտի տնտեսավարողների կողմից հայտարարագրված հարկի դրույքաչափերը 2024թ-ի և 2025թթ-ի համեմատելու համար, վերցրել ենք նույն խմբի՝ տարեկան մինչև 115,0 մլն շրջանառություն ունեցող շրջանառության հարկ վճարողների 2024թ-ի տարեկան իրացման շրջանառության նկատմամբ տնտեսավարողների կողմից հայտարարագրած շրջանառության հարկի համադրությունը, որպես արդյունավետ, միջինացված շրջանառության հարկի դրույքաչափ և այդ մեծությունները համեմատել, արդեն 2025թ-ի արդյունքներով տարվա 1-ին կեսի և 2-րդ կիսամյակի (ԱԱՀ-ի իրացումը միասին վերցրած) իրացման շրջանառությունների նկատմամբ համադրել տվյալ ժամանակահատվածի համար հայտարարագրված շրջանառության հարկն ու ԱԱՀ-ն: Այս բանաձևով իհարկե չենք ստանում թիրախային այս երկու ոլորտի հարկային բեռի (դրույքների մակարդակով) փոփոխության ամբողջ պատկերը, քանի որ այս Տեղեկանքի ձևավորման ժամանակ, դեռևս հայտնի չէր թիրախ խմբի տնտեսավարողների տարեկան հաշվարկված շահութահարկի մեծությունները:

Մասնավորապես, բացառապես **հաշվապահական ծառայություններ** մատուցող, տարեկան մինչև 115,0 մլն դրամ շրջանառություն ունեցող ակտիվ տնտեսավարողների խումբը, 2024թ-ի համար հայտարարագրել է միջինացված **5**% շրջանառության հարկ, որը 2025թ-ի արդյունքներով **աճել է մոտ երկու անգամ**, կազմելով՝ **13**% (*վերցված է 2025թ-ի 1-ին կիսամյակի շրջ. հարկն ու 2-րդ կիսամյակի ԱԱՀ-ն, դեռևս առանց շահութահարկի*): Բնական է, որ այս ցուցանիշը կավելանա, արդեն 2026թ-ի ապրիլից հետո, տվյալ խմբի տնեսավարողների կողմից հայտարարագրվող շահութահարկը հայտնի դառնալուց:

Նույն տրամանաբանությամբ, բացառապես **իրավաբանական ծառայություններ** մատուցողների ոլորտի, մինչև 115,0 մլն դրամ տարեկան շրջանառություն ունեցողների խումբը, 2024թ-ին հայտարարագրել է միջինացված **6**% շրջանառության հարկ, որի համեմատ, 2025թ-ի տարեկան արդյունքներով (նորից վերցվել է 1-ին կիսամյակի շրջ. հարկ և 2-րդ կիսամյակի ԱԱՀ) երկու հարկատեսակը միասին վերցրված, աճել է երկու անգամից ավելի, կազմելով **15**%:

Գրաֆիկ 8. ***հարկային դրույքներ միջինացված _24-25թթ***



4. ԱՄՓՈՓՈՒՄ

Ինչպես նշել էինք այս Տեղեկանքի նախաբանում, ՓՄՁ Ասոցիացիան, սույն Տեղեկանքում նպատակ չի դրել դուրս բերված թվերով եզրակացություններ և գնահատականներ ներկայացնելու: Այն պարզ պատճառով, որ դրանք անելու, ազդեցության գնահատականներ տալու համար անհրաժեշտ են ավելի խորը տվյալներ և ուսումնասիրություններ: Բացի տնտեսավարողների կողմից պաշտոնական ներկայացված հաշվետվություններում առկա տվյալներից, կարիք կա նաև «դաշտային» աշխատանքներ կատարելու և նման փոփոխությունները, այդ թվում տնտեսավարողների վարքագծային փոփոխությունները ավելի խորքային գնահատելու համար:

ՓՄՁ Ասոցիացիան, մշտապես կարևորել և շեշտադրում է, ցանկացած օրենսդրական փոփոխություններ, որոնք վերաբերում են բիզնես միջավայրին, իսկ առավել զգայուն և չլսված, մեծամասնություն կազմող Գերփոքր տնտեսավարողներին, պարտադիր և անհրաժեշտ է իրականացնել Օրենսդրության Կարգավորման Ազդեցության Գնահատականներից հետո միայն (ՕԿԱԳ), որը կարևոր է նաև իրականացնել, տվյալ փոփոխությունների ընդունումից հետո նաև:

Այստեղ դժվար է գնահատել նաև ՓՄՁ-ների, մասնավորապես Գերփոքրերի հարկային բեռի ավելացումը, քանի որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված և վերլուծված տվյալներով սույն Տեղեկանքում ներկայացվել է միայն զուտ միջինացված դրույքաչափերի աճերը: Իսկ մի շարք միջազգային և նմանատիպ վերլուծություններում «Հարկային բեռի» հաշվարկման համար նաև հաշվի է առնվում տվյալ տնտեսավարողի կողմից սահմանված հարկը հաշվարկելու վրա ծախսվող ժամանակը, այն մասնագետ (ների) կողմից տվյալ հաշվարկներն անելու համար վճարվող մարդ/ժամ և այլ մեծություններ:

Հնարավոր է, որ սույն Տեղեկանքում ներկայացված մի քանի համադրություններ ընդունելի չլինեն փորձագիտական համայնքի կողմից, բայց այստեղ փորձ է արվել, եղած, հայցված և ստացված

ինֆորմացիաների հիման վրա, որոշ դեպքերում դուրս բերել կամ մոտարկված կամ միջինացված ցուցանիշներ, որպեսզի փոքր ինչ ավելի հստակ պատկեր տեսնելու համար:

Չնայած այն հանգամանքին, որ սույն Տեղեկանքում ներկայացված վերլուծությունը արվել է հիմնականում ՀՀ ՊԵԿ-ի կողմից ստացված տեղեկատվության հիման վրա, ներկայացված վերլուծության համար պատասխանատու է միայն ՓՄՁ Ասոցիացիայի այն թիմը, որն աշխատել է այս փաստաթղթի վրա: ՓՄՁ Ասոցիացիան, սույն Տեղեկանքը մշակել է սեփական նախաձեռնությամբ և սեփական ռեսուսրներով:

Նախագծի հեղինակ, ղեկավար	Նախագծի Օգնական
Հակոբ Ավագյան	Նարե Նահապետյան
ՓՄՁ Ասոցիացիայի նախագահ	ՓՄՁ ասոցիացիացի ծրագրերի համակարգող